Digitally signed by
SHAHINYAN ARMINE 7610810134
Date: 21.08.2024 12:47:34

Հավելված N1
Հայաստանի Հանրապետության
պետական եկամուտների կոմիտեի նախագահի
2020 թվականի ապրիլի 17-ի
N 337-Ն հրամանի

Ձև

ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀՐԱՊԱՐԱԿՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ
ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
Հիմնադրամի հոգաբարձուների
խորհրդի 17-06-2024 թ. որոշմամբ
««ԴԱՍԱՎԱՆԴԻ՛Ր, ՀԱՅԱՍՏԱՆ» ԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ»
Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն
հիմնադրամի 2023 թ. գործունեության մասին

1. Հիմնադրամի՝		
1.1 Լրիվ անվանումը		«ԴԱՍԱՎԱՆԴԻ՛Ր, ՀԱՅԱՍՏԱՆ» ԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ
1.2 Գտնվելու վայրը		ԵՐԵՎԱՆ ԿԵՆՏՐՈՆ ԿԵՆՏՐՈՆ ԹԱՂԱՄԱՍ ԱՄԻՐՅԱՆ Փ. 18/3 12
1.3 Պետական գրանցման համարը		222.160.883728
1.4 Պետական գրանցման տարին, ամիսը, ամսաթիվը		2015-12-30
1.5 ՀՎՀՀ-ն		02645043
1.6 Հեռախոսը (այդ թվում՝ բջջային)		+(374)93548328
1.7 Պաշտոնական ինտերնետային կայքը		www.teacforarmenia.org
1.8 Էլեկտրոնային փոստը		armine.shahinyan@aaaccounting.am
2. Հիմնադրի անուն, ազգանուն կամ անվանում՝		
Լարիսա Հովաննիսյան		
3. Հոգաբարձուների խորհրդի անդամների անուն, ազգանուն՝		
4. Կառավարչի անուն, ազգանուն՝		
5. Աշխատակազմում ընդգրկված անձանց քանակը	41	
6. Անձեռնմխելի կապիտալի չափը	0	
7. Անձեռնմխելի կապիտալի կառավարումից ստացված եկամուտ	0	
8. Ֆինանսավորման աղբյուրները՝		
8.1 Ֆինանսավորումն ըստ խմբերի	8.2 Ստացված ֆինանսական միջոցների նպատակը	8.3 Չափը
8.1.1 Պետական և համայնքային բյուջեներից դրամական մուտքեր		
8.1.2 Իրավաբանական անձանցից դրամական մուտքեր		
	Հիմնադրամի երկամյա առաջնորդության զարգացման ծրագրի ֆինանսավորում	1,615,494,616
	"Պետականաշինության ջատագովները" ծրագիր	4,830,000
	Կայծ սոցիալական նորարարության ինկուբատոր ծրագիր	5,000,000

	Սերունդ դպրոցներ ԿԾ Ստեփանավանի դպրոցների համար	15,360,000
	Արցախից տեղահանված աշակերտների կրթության ապահովում	3,040,000
	ԴՀի Նեյշն Բիլդերս դրամաշնորհային ծրագիր	1,995,000
8.1.3 Ֆիզիկական անձանցից դրամական մուտքեր		
	Նվիրատվություն	4,195,562
9. Հիմնադրի ներդրումը՝		
9.1 Դրամական միջոցներ		
9.2 Գույք	9.2.1 Տեսակը	9.2.2 Արժեքը
10. Նվիրատվությունները/ նվիրաբերությունները		
10.1 Նվիրատուները/նվիրաբերողներն ըստ խմբերի՝	10.2 Նվիրված/նվիրաբերված գույք	
	10.2.1 Տեսակը	10.2.2 Արժեքը
10.1.1 Հայաստանի Հանրապետություն/համայնքներ		
10.1.2 Իրավաբանական անձինք		
10.1.3 Ֆիզիկական անձինք		
11. Իրականացված ծրագրերը՝		
11.1 Ծրագրի անվանումը	11.2 Ծախսված գումարը	
Մաթմիքս	169,600	
Արվեստը արվեստի համար	200,000	
Բուք Բերդ	111,200	
Լեզվասերներ / Լեզվի արահետ	173,900	
Թափոնն արվեստի գործ է	180,000	
Նոր կյանք թղթին	185,970	
Պատանի հետազոտողներ	194,500	
Խոսքի ուժը	183,480	
Արմատ	199,800	
«Կանաչ ապագա»	196,000	
«Ապագայի Էվկլիդեսներ»	186,500	
Խոսուն գերմաներեն	177,680	
Իմ միջավայրը	198,300	
Ուղիղ գրել և ուղիղ խոսել	200,000	
Տատիկի թեյերը	162,800	
Մաթ դարդեն	180,800	
Ինգլիշ Սփիքինգ քլաբ	200,000	
“Հոգատար և գեղեցիկ դպրոցական համայնք”	199,300	
«Զրույցն աչքի առաջ»	193,400	
«Մեր համայնքը մերը դարձնելով»	176,400	
«Բանաստեղծ»	176,000	
«Բնության պահապաններ»	190,410	
«Նյութէ»	163,100	
«Ուզու՞մ ես լինել առողջ, սնվի՛ր առողջ»	199,500	
«Ֆինանսական մաթեմատիկա»	193,500	
«Ընթերցասերների ակումբ»	191,200	

«Էն չքնաղ երկրի չքնաղ անկյունը»	194,300
«Հայկական կարպետ վրանի տակ»	180,000
«Առողջ Կաճաճկուտ»	190,000
«Էկոծրար»	181,500
Թենիսի անկյուն	248,000
ՏՀՏ կենտրոն	204,000
Ռոբոտիքս	490,404
Ամերիքքն քլաբ	310,000
Կենսաբանության թաքնված կողմերը	499,000
Ոսկե ձեռքեր	292,000
Մեդիագիտակ	488,400
Ժամանակակից արհեստանոց	491,500
Նորարար կաշեգործների Արտ-լաբ	499,800
Արցախի տեղահանվածներին նվիրատվություն	3,900,000
Ֆինանսական աջակցություն մասնակիցներին	305,881,000
Նվիրաբերություն ՀՀ դպրոցներին	55,724,227
Դասավանդիր Հայաստանի կրթական նորարարական ծրագրերի ֆինանսավորում	5,000,000
Նախաձեռնությունը արտակարգ կրթության մեջ	4,884,000
Ամառային ակադեմիայի ֆինանսավորում	52,485,085
12. Ֆինանսական տարում օգտագործված միջոցների ընդհանուր չափը	1,562,902
13. Կանոնադրական նպատակների իրականացմանն ուղղված ծախսերի չափը	436,926

Նշումներ՝

Հաշվետվությունում ներկայացված են փաստացի կատարված ծախսերը

Ֆինանսական հաշվետվություններն ու ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտն իրականացնող անձի (աուդիտորի) եզրակացությունը՝ ____31____ էջերից:
էջերի քանակը

Հիմնադրամի տնօրեն _____
ստորագրությունը, անունը, ազգանունը

Գլխավոր հաշվապահ _____
ստորագրությունը, անունը, ազգանունը

Grant Thornton

Անկախ աուդիտորի եզրակացություն

Գրանթ Թորնթոն ՓԲԸ
Երևան Պլազա բիզնես կենտրոն
ՀՀ, ք. Երևան 0015
Գրիգոր Լուսավորչի 9
Հ. + 374 10 50 09 64/61

Grant Thornton CJSC
Yerevan Plaza Business Center
9 Grigor Lusavorich Street,
Yerevan 0015, Republic of Armenia
T + 374 10 50 09 64/61

«Դասավանդի՛ր, Հայաստան» կրթական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդին

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Դասավանդի՛ր, Հայաստան» կրթական հիմնադրամի (Հիմնադրամ) ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա համապարփակ արդյունքների մասին հաշվետվությունը, զուտ ակտիվներում փոփոխությունների մասին հաշվետվությունը և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերի վերաբերյալ համառոտագիրը:

Մեր կարծիքով՝ կից ֆինանսական հաշվետվությունները տալիս են Հիմնադրամի՝ 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի և նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքների ու դրամական հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը՝ համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ-ներ):

Կարծիքի հիմք

Մենք աուդիտն անցկացրել ենք աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է մեր եզրակացության՝ *«Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար»* բաժնում: Մենք անկախ ենք Հիմնադրամից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված *«Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի»* (ՀԷՄՍԽ կանոնագիրք) և էթիկայի համապատասխան պահանջների, որոնք կիրառելի են ֆինանսական հաշվետվությունների մեր աուդիտի նկատմամբ Հայաստանի Հանրապետությունում, և կատարել ենք էթիկայի գծով մեր այլ պարտականությունները՝ էթիկայի նշված պահանջների համաձայն: Մենք համոզված ենք, որ մեր կողմից ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

Այլ հանգամանք

Ինչպես նկարագրված է ծանոթագրություն 22-ում, հաշվետու տարվա ընթացքում Հիմնադրամը վերանայել է 2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ֆինանսական հաշվետվությունները: Մենք նաև աուդիտի ենք ենթարկել այս վերաներկայացումները:

Այլ տեղեկատվություն

Ղեկավարությունը պատասխանատու է այլ տեղեկատվության համար: Այլ տեղեկատվությունը ներառում է Հիմնադրամի 2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա տարեկան հաշվետվության մեջ ներառված տեղեկատվությունը, սակայն չի ներառում ֆինանսական հաշվետվությունները և դրանց վերաբերյալ մեր աուդիտորի հաշվետվությունը: Ակնկալվում է, որ տարեկան հաշվետվությունը հասանելի կլինի մեզ այս աուդիտորական հաշվետվության ամսաթվից հետո:

Ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ մեր կարծիքը չի տարածվում այլ տեղեկատվության վրա, և մենք դրա վերաբերյալ որևէ երաշխիք չենք տալիս:

Ֆինանսական հաշվետվությունների մեր աուդիտի հետ կապված՝ մեր պարտականությունն է ծանոթանալ վերը նշված այլ տեղեկատվությանը, երբ դրանք հասանելի դառնան, և դրանով իսկ դիտարկել՝ արդյոք այլ տեղեկատվությունը էականորեն անհամապատասխան է ֆինանսական հաշվետվություններին կամ աուդիտի ընթացքում ձեռք բերված մեր գիտելիքներին, կամ ըստ երևույթին, էականորեն խեղաթյուրված է:

Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-ների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է Հիմնադրամի՝ անընդհատ գործելու կարողությունը գնահատելու համար, համապատասխան դեպքերում անընդհատության հետ կապված հարցերը բացահայտելու և Հիմնադրամի գործունեության անընդհատության ենթադրության հիման վրա հաշվետվությունները պատրաստելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված իրավասու մարմինը/ ղեկավարությունը մտադիր է լուծարել Հիմնադրամը, ընդհատել դրա գործունեությունը կամ, երբ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձիք պատասխանատու են Հիմնադրամի ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից՝ անկախ դրանց՝ խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ

ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած կազդեն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

Որպես ԱՄՍ-ներին համապատասխան աուդիտի մաս, աուդիտի ողջ ընթացքում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում ենք մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- Որոշակիացնում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար ու համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության պատճառով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության չարաշահում:
- Ձեռք ենք բերում պատկերացում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, այլ ոչ թե Հիմնադրամի ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
- Գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և համապատասխան բացահայտումների ողջամտությունը:
- Եզրահանգումներ ենք կատարում ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և, հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա, գնահատում ենք՝ արդյոք առկա է դեպքերի կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող է նշանակալի կասկած հարուցել Հիմնադրամի անընդհատ գործելու կարողության վերաբերյալ: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Այնուամենայնիվ, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Հիմնադրամին դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը:
- Գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Կառավարման օղակներում գտնվող անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտորական առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև

Grant Thornton

աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

Արմեն Հովհաննիսյան

Տնօրեն

13 հունիսի 2024թ.

Էմիլ Վասիլյան, FCCA

Առաջադրանքի պատասխանատու

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

Հազար դրամ	Ծանոթ.	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ (վերաներ-կայացված)
Ակտիվներ			
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	4	29,449	36,386
Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ	5	28,160	53,233
Ոչ նյութական ակտիվներ		5,153	6,833
Ոչ ընթացիկ կանխավճարներ		895	1,207
		63,657	97,659
Ընթացիկ ակտիվներ			
Պաշարներ	6	16,234	81,874
Ստացվելիք շնորհներ	10	325,406	-
Կանխավճարներ և այլ ակտիվներ	7	5,284	22,396
Մնացորդներ բանկերում	8	862,352	690,723
		1,209,276	794,993
Ընդամենը ակտիվներ		1,272,933	892,652

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն (շարունակություն)

Հազար դրամ	Ծանոթ.	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ (վերաներ-կայացված)
Պարտավորություններ և զուտ ակտիվներ			
Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Վարձակալության գծով պարտավորություն	5	11,000	31,482
		11,000	31,482
Ընթացիկ պարտավորություններ			
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	9	95,109	115,824
Վարձակալության գծով պարտավորություն	5	18,707	21,545
Սահմանափակ միջոցներ	10	1,143,928	734,807
		1,257,744	872,176
Զուտ ակտիվներ			
Կուտակված արդյունք		4,189	(11,006)
		4,189	(11,006)
Ընդամենը պարտավորություններ և զուտ ակտիվներ		1,272,933	892,652

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են 2024թ. հունիսի 12-ին

Լարիսա Վիրջինիա Հովաննիսյան Էդգարինե Շահինյան

Գլխավոր գործադիր տնօրեն Գլխավոր հաշվապահ

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունները պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 12-ից մինչև 33-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն

Հազար դրամ	Ծանոթ.	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի (վերաներ-կայացված)
Եկամուտ			
Շնորհներից եկամուտ	14	1,564,973	1,742,784
Այլ եկամուտ		1,644	2,338
		1,566,617	1,745,122
Ծախսեր			
Ծրագրային ծախսեր	11	(963,504)	(1,124,500)
Ծրագրի աջակցության ծախսեր	12	(407,298)	(333,680)
Վարչական ծախսեր	13	(193,845)	(289,872)
Արժեզրկումից կորուստ/(արժեզրկման հակադարձում)	8	(2,726)	42
Ֆինանսական ծախս	5	(5,988)	(2,051)
Այլ ծախսեր		(9,731)	(15,170)
Փոխարժեքային տարբերությունից զուտ օգուտ/(վնաս)		31,670	(73,485)
		(1,551,422)	(1,838,716)
Արդյունք մինչև հարկերը		15,195	(93,594)
Շահութահարկի գծով ծախս		-	-
Տարվա արդյունք		15,195	(93,594)

Համապարփակ արդյունքների մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 12-ից մինչև 33-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Զուտ ակտիվներում փոփոխությունների մասին հաշվետվություն

Հազար դրամ	Կուտակված արդյունք	Ընդամենը
2022թ. հունվարի 1-ի դրությամբ	82,588	82,588
Տարվա արդյունք նախքան վերաներկայացումը	(84,223)	(84,223)
Վերաներկայացում	(9,371)	(9,371)
Տարվա արդյունք վերաներկայացումից հետո	(93,594)	(93,594)
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	(11,006)	(11,006)
Տարվա արդյունք	15,195	15,195
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	4,189	4,189

Զուտ ակտիվներում փոփոխությունների մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 12-ից մինչև 33-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն

Հազար դրամ	Ծանոթ.	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր			
Նվիրատվություններից մուտքեր		1,647,680	1,996,830
Ծառայությունների մատուցումից դրամական հոսքեր		-	9,853
Այլ դրամական հոսքեր		1,157	1,249
Վճարումներ վարչական ծախսերի համար՝ բացառությամբ աշխատավարձի		(347,250)	(385,943)
Վճարումներ աշխատակիցներին		(541,966)	(528,131)
Վճարումներ պետական բյուջե		(200,180)	(189,113)
Վճարումներ ծրագրային ծախսերի համար՝ բացառությամբ աշխատավարձի		(395,874)	(564,788)
Գործառնական գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցներ		163,567	339,957
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր			
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերում		(932)	(16,552)
Ներդրումային գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ		(932)	(16,552)
Ֆինանսավորման գործունեությունից դրամական միջոցների հոսքեր			
Վարձակալության գծով վճարներ		(21,177)	(21,169)
Ֆինանսավորման գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ		(21,177)	(21,169)
Դրամարկղում և բանկերում մնացորդների զուտ աճ		141,458	302,236
Արտարժույթի փոխարժեքի ազդեցությունը դրամական միջոցների վրա		32,897	(75,631)
Դրամարկղում և բանկերում մնացորդներ տարվա սկզբում		692,327	465,722
Դրամարկղում և բանկերում մնացորդներ տարվա վերջում		866,682	692,327

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 12-ից մինչև 33-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ միասին:

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

1 Գործառնությունների բնույթը և ընդհանուր տեղեկատվություն

«Դասավանդի՛ր, Հայաստան» կրթական հիմնադրամի (այսուհետ՝ «Հիմնադրամ») տեսլականն է Հայաստանի բոլոր երեխաներին, անկախ սոցիալ-տնտեսական հանգամանքներից, ընձեռել հնարավորություն՝ բացահայտելու իրենց ողջ ներուժը գերազանց կրթության միջոցով:

Ուսուցչական առաջնորդության միջոցով Հիմնադրամն ապահովում է գերազանց կրթության հնարավորությունների հասանելիությունը յուրաքանչյուր երեխայի համար: Հիմնադրամը հետևողականորեն գերազանցում է գործունեության ներազդեցության ակնկալիքները: Իր տարածական և քանակական ընդգրկունությամբ այս շարժումն ունի հսկայական ներուժ՝ վերափոխել ոչ միայն Հայաստանի կրթական համակարգը, այլև երկրի զարգացումն առհասարակ: Մանսակիցներն աշխատում են որպես ուսուցիչներ, փորձառու մասնագետներ, առաջնորդներ հանրապետության տարբեր դպրոցներում, ովքեր շարունակում են փոփոխություններ իրականացնել անգամ ծրագրի ավարտից հետո:

«Դասավանդի՛ր, Հայաստան» կրթական հիմնադրամը ստեղծվել է Լարիսա Վիրջինիա Հովհաննիսյանի կողմից և գրանցվել է 2015 թ. դեկտեմբերի 30-ին: Հիմնադրամի իրավաբանական հասցեն է՝ Հայաստանի Հանրապետության, Երևան 0002, Ամիրյան 18/3, բն. 12: Հիմնադրամի գործունեության հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010, Մելիք Ադամյան 2/1: Հիմնադրամը հանդիսանում է ՀՀ Կրթության նախարարության գործընկեր: Հիմնադրամը հանդիսանում է նաև TEACH FOR ALL, Inc. (Թիչ ֆոր օլ Ինք.) համաշխարհային կրթական ցանցի գործընկեր կազմակերպություն:

Հիմնադրամի աշխատանքների կառավարումը և վերջնական վերահսկողությունն իրականացվում է 5 հոգուց բաղկացած Հոգաբարձուների խորհուրդի կողմից (2022 թ.՝ 5): Հիմնադրամը նվիրատվություններ է ստանում ՀՀ և օտարերկրյա գործընկերներից և անհատներից :

2023 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Հիմնադրամի աշխատակիցների թիվը կազմել է 46 (2022թ. դեկտեմբերի 31-ին՝ 46):

Գործարար միջավայր

Հայաստանում իրականացվող քաղաքական և տնտեսական փոփոխությունները, ինչպես նաև իրավական, հարկային և օրենսդրական համակարգերի զարգացումը շարունակական բնույթ են կրում: Հայաստանի տնտեսության կայունությունը և զարգացումը մեծապես կախված է այս փոփոխություններից: Կառավարությունը հաստատել է արդյունավետ կառավարման իր հանձնառությունը, որը ենթադրում է հակակոռուպցիոն ջանքեր, թափանցիկություն և հաշվետվողականություն:

Իրավիճակն Հայաստանի Հանրապետությունում էլ ավելի է սրվել Ադրբեջանի Հանրապետության կողմից սանձազերծված պատերազմի արդյունքում: Չնայած կնքված զինադադարի համաձայնագրին՝ դեռևս անորոշ են պատերազմի հետևանքները Հայաստանի տնտեսության վրա թե կարճաժամկետ, և թե երկարաժամկետ առումներով:

2023թ. Հայաստանի Հանրապետությունում քաղաքական իրավիճակը շարունակում է մնալ համեմատաբար անկայուն, 44-օրյա Արցախյան պատերազմի հետևանքները դեռևս էական

ազդեցություն են ունենում երկրի ընդհանուր տնտեսության վրա: 2023թ. սեպտեմբերին շուրջ 120,000 Արցախաբնակ հայերի բռնի տեղահանումը դեպի Հայաստան լրացուցիչ տնտեսական և քաղաքական ցնցումների առիթ հանդիսացավ: Քաղաքական անկայուն իրավիճակի, միջազգային ճանապարհների պարբերաբար փակման, հրադադարի ռեժիմի կարճաժամկետ խախտումների հետևանքով, դժվար է հստակ կանխատեսել նշված պայմանների տնտեսական ազդեցությունը Հիմնադրամ գործունեության վրա:

2022թ. փետրվարի 24-ին Ուկրաինայում բռնկված հակամարտությունն արագությամբ ծավալվում է՝ զգալի ազդեցություն թողնելով աշխարհի վրա: ԱՄՆ-ն և եվրոպական երկրները կոշտ պատժամիջոցներ են կիրառել Ռուսաստանի Դաշնության դեմ: Արևմտյան երկրները քննարկում են գոյություն ունեցող պատժամիջոցների ընդլայնումը: Ռուսաստանի Դաշնությունը Հայաստանի Հանրապետության էական առևտրատնտեսական գործընկերն է, ուստի սույն ֆինանսական հաշվետվությունների ամսաթվի դրությամբ կիրառվող պատժամիջոցները, ինչպես նաև դրանց ընդարձակումը կարող են լուրջ ազդեցություն ունենալ Հայաստանի Հանրապետության ֆինանսական շուկաների և ամբողջ տնտեսության վրա: Համաշխարհային մակարդակով ավելի խոր պատժամիջոցներ կիրառելը կարող է հանգեցնել բարձր գնաճի, ֆինանսական շուկաների աճի տեմպի նվազման և որոշակի խաթարման:

Ուկրաինայում բռնկված հակամարտությունը պատճառ դարձավ, որ հազարավոր ռուսներ և ուկրաինացիներ տեղափոխվեն Հայաստանի Հանրապետություն: Սա վերաբերում է ոչ միայն անհատներին, այլ նաև ձեռնարկություններին, որոնք հիմնադրվել և իրենց գործունեությունը ծավալել են այդ երկրներում: Դա հանգեցրեց հայկական շուկա արտարժույթի ներհոսքի ավելացմանը, ինչի հետևանքով հայկական դրամը զգալի արժևորվեց ԱՄՆ դոլարի և եվրոյի նկատմամբ: Մյուս կողմից, ՀՀ կենտրոնական բանկը ոչ մի միջոց չձեռնարկեց, որպեսզի թուլացնի հայկական ազգային արժույթի դիրքերը:

Հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում նկատվել է փոխարժեքի կայունություն, հետևաբար ղեկավարությունը չի ակնկալում, որ հայկական դրամի հետագա արժեւորում կլինի ԱՄՆ դոլարի և եվրոյի նկատմամբ: Սակայն Հայաստանի Հանրապետությունում տնտեսական և քաղաքական գործոնները, ինչպես նաև Ուկրաինայում շարունակվող հակամարտությունը կարող են բացասաբար ազդել Հիմնադրամի ֆինանսական կայունության վրա, որի ամբողջական հետևանքները այս պահին դժվար է կանխատեսել:

Հիմնադրամի ղեկավարությունը գտնում է, որ իր ընթացիկ իրացվելիության վիճակը բավարար է կայուն գործունեության համար: Հիմնադրամը պարբերաբար վերանայում է իր իրացվելիության մակարդակը և, անհրաժեշտության դեպքում, պատրաստ է կիրառել իրացվելիության աջակցության համապատասխան գործիքակազմ:

Ղեկավարության գնահատմամբ վերոնշյալ իրադարձությունները նշանակալի ազդեցություն չեն ունենա Հիմնադրամի գործունեության և ֆինանսական հաշվետվությունների վրա, քանի որ Հիմնադրամը շահույթ չհետապնդող ընկերություն է, որը ֆինանսավորվում է միջազգային դոնորների կողմից՝ իրականացնելու կրթական ծրագրեր՝ ուղղված Հայաստանի Հանրապետությունում կրթության ոլորտի զարգացմանը և ժամանակակից կրթական մեթոդների հասանելիությանը, և չկան այնպիսի գործոններ, որոնք կասկածի տակ կդնեն այդ գործողությունների ու նախաձեռնությունների շարունակական լինելը:

Տվյալ ֆինանսական հաշվետվությունները չեն արտացոլում վերը նկարագրվածի հնարավոր ապագա ազդեցությունը Հիմնադրամի գործունեության վրա: Վերոնշյալ իրադարձությունները կարող են հետագայում էական ազդեցություն ունենալ Հիմնադրամի ապագա գործունեության և ֆինանսական կայունության վրա, որոնց ամբողջական հետևանքները դժվար է կանխատեսել ներկա պահին: Ապագա տնտեսական և քաղաքական

իրավիճակը և վերջիններիս ազդեցությունը Հիմնադրամի գործունեության վրա կարող են տարբերվել Հիմնադրամի ղեկավարության ներկա սպասումներից:

2 Պատրաստման հիմքերը

2.1 Համապատասխանություն

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ) համաձայն, ինչպես հրապարակվել է Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) կողմից: Հաշվետվությունները պատրաստվել են՝ հիմնվելով այն գնահատման վրա, որ Հիմնադրամն իր գործունեությունն իրականացնում է անընդհատության սկզբունքից ելնելով, քանի որ ունի բավարար ռեսուրսներ իր գործունեությունը տեսանելի ապագայում շարունակելու համար:

Ներկայումս ՖՀՄՍ-ները չեն պարունակում հաշվապահական հաշվառման վարման և ֆինանսական հաշվետվությունների ներկայացման վերաբերյալ հատուկ ուղեցույցներ շահույթ չհետապնդող և ոչ կառավարական կազմակերպությունների համար: Եթե ՖՀՄՍ-ները չեն տալիս ուղղություն շահույթ չհետապնդող ոլորտի կազմակերպություններին հատուկ գործարքների հաշվառման վերաբերյալ, ապա հաշվապահական հաշվառման քաղաքականությունը պետք է հիմնվի ՖՀՄՍ-ների ընդհանուր սկզբունքների վրա՝ համաձայն Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) *«Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ներկայացման հայեցակարգային հիմունքների»*:

2.2 Չափման հիմքեր

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են հաշվեգրման սկզբունքով և սկզբնական արժեքի մեթոդով, բացառությամբ որոշ ֆինանսական գործիքների, որոնք ներկայացված են ապագա դրամական հոսքերի ներկա զեղչված արժեքով:

2.3 Գործառնական և ներկայացման արժույթ

Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը հայկական դրամն է (դրամ), որն էլ հանդիսանում է Հիմնադրամի գործառնական արժույթը, քանի որ այն լավագույնս արտացոլում է ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած իրադարձությունների և Հիմնադրամի գործարքների տնտեսական բովանդակությունը:

Սույն ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են հայկական (եթե այլ բան նշված չէ), քանի որ, ղեկավարության համոզմամբ, այս արժույթն առավել օգտակար է Հիմնադրամի ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների համար: Դրամով ներկայացված ամբողջ ֆինանսական տեղեկատվությունը կլորացված է մինչև մոտակա հազար միավորը:

2.4 Գնահատումների և դատողությունների կիրառում

ՖՀՄՍ-ներին համապատասխան ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը պահանջում է, որպեսզի Հիմնադրամի ղեկավարությունը կարևոր գնահատումներ և ենթադրություններ կատարի, որոնք ազդեցություն են գործում ֆինանսական հաշվետվությունների ամսաթվի դրությամբ ակտիվների և պարտավորությունների գումարների, ինչպես նաև հաշվետու տարվա եկամուտների և ծախսերի գումարների վրա:

2.5 Նոր և վերանայված ստանդարտների ընդունում

Ընթացիկ տարում Հիմնադրամն ընդունել է իր գործունեության համար կիրառելի և 2023թ. հունվարի 1-ից սկսվող ժամանակաշրջանների համար ուժի մեջ մտած բոլոր նոր և վերանայված ստանդարտները և մեկնաբանությունները, որոնք հրապարակվել են Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) և ՀՀՄՍԽ-ի Մեկնաբանման կոմիտեի (ՄԿ) կողմից:

Ստանդարտներ, փոփոխություններ և մեկնաբանություններ գործող ստանդարտների վերաբերյալ, որոնք դեռևս չեն գործում և նախօրոք չեն ներդրվել Հիմնադրամի կողմից

Ներքոհիշյալ նոր ստանդարտներն ու փոփոխությունները, որոնք առաջին անգամ կիրառվել են 2023թ., որևէ էական ազդեցություն չեն ունեցել Հիմնադրամի ֆինանսական հաշվետվությունների վրա:

Ստանդարտ	Ստանդարտի կամ մեկնաբանության անունը
ՖՀՄՍ 17	*Փոփոխություններ Ապահովագրական պայմանագրերում ՖՀՄՍ 17, ներառյալ ՖՀՄՍ 9-ի կիրառումից ժամանակավոր ազատման երկարաձգումը (ՖՀՄՍ 4 փոփոխություններ)*
ՀՀՄՍ 12	*Մեկ գործարքից առաջացող ակտիվներին և պարտավորություններին վերաբերող հետաձգված հարկ (ՀՀՄՍ 12 փոփոխություններ)*
ՀՀՄՍ 1	*Պարտավորությունների դասակարգումը որպես ընթացիկ կամ ոչ ընթացիկ (ՀՀՄՍ 1 փոփոխություն)*
ՀՀՄՍ 8	*Հաշվապահական հաշվառման գնահատումների սահմանում (ՀՀՄՍ 8 փոփոխություն)*
ՀՀՄՍ 1	*Հաշվապահական հաշվառման քաղաքականության բացահայտում (ՀՀՄՍ 1 և Գործնական կիրառություն 2)*
ՀՀՄՍ 1	*Պարտավորությունների դասակարգումը որպես ընթացիկ կամ ոչ ընթացիկ (ՀՀՄՍ 1 փոփոխություն)*
ՀՀՄՍ 16	*Վարձակալության պարտավորություն Վաճառքի և հետադարձ վարձակալության գործարքի ժամանակ (ՖՀՄՍ 16 փոփոխություն)*
ՀՀՄՍ 1	*Ոչ-ընթացիկ պարտավորություններ պայմանագրերի հետ (ՀՀՄՍ 1 փոփոխություն)*

Ստանդարտներ, փոփոխություններ և մեկնաբանություններ գործող ստանդարտների վերաբերյալ, որոնք դեռևս չեն գործում և նախօրոք չեն ներդրվել Հիմնադրամի կողմից

Այս ֆինանսական հաշվետվությունների հաստատման ամսաթվի դրությամբ Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) կողմից թողարկվել են որոշակի նոր ստանդարտներ, փոփոխություններ և մեկնաբանություններ գործող ստանդարտների վերաբերյալ, որոնք սակայն դեռևս չեն գործում և նախօրոք չեն ներդրվել Հիմնադրամի կողմից:

Ղեկավարությունը կանխատեսում է, որ բոլոր կիրառելի հրապարակումները կներդրվեն Հիմնադրամի/հաշվապահական հաշվառման քաղաքականությունում սկսած հրապարակման ուժի մեջ մտնելու ամսաթվին հաջորդող առաջին իսկ ժամանակաշրջանից:

Ղեկավարության կանխատեսմամբ այս փոփոխությունները էական ազդեցություն չեն ունենա Հիմնադրամի ֆինանսական հաշվետվությունների վրա և ներկայացված են ստորև.

Ստանդարտ	Ստանդարտի կամ մեկնաբանության անունը	Տվյալ ամսաթվին կամ դրանից հետո սկսվող հաշվետու ժամանակաշրջանների համար կիրառելի
ՀՀՄՍ 1	*Պարտավորությունների դասակարգումը որպես ընթացիկ կամ ոչ ընթացիկ (ՀՀՄՍ 1 փոփոխություն)*	*1 հունվարի 2024թ.*
ՖՀՄՍ 16	*Վարձակալության պարտավորություն Վաճառքի և հետադարձ վարձակալության գործարքի ժամանակ (ՀՀՄՍ 16 փոփոխություն)*	*1 հունվարի 2024թ.*
ՀՀՄՍ 1	*Ոչ-ընթացիկ պարտավորություններ պայմանագրերի հետ (ՀՀՄՍ 1 փոփոխություն)*	*1 հունվարի 2024թ.*
ՀՀՄՍ 7 և ՖՀՄՍ 7	*Մատակարարների ֆինանսական պայմանավորվածություններ (ՀՀՄՍ 7 և ՖՀՄՍ 7 փոփոխություններ)*	*1 հունվարի 2024թ.*
ՀՀՄՍ 21	*Փոխանակելիության բացակայություն (ՀՀՄՍ 21 փոփոխություն)*	*1 հունվարի 2025թ.*

2.6 Ֆինանսական հաշվետվությունների վերահաստատում

Հիմնադրամը կիրառում է հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունները և իրականացնում է նախորդ տարիների սխալների ուղղումը հետընթաց՝ դրանց հայտնաբերումից հետո թողարկման համար հայտարարված ֆինանսական հաշվետվությունների առաջին փաթեթում՝ վերահաշվարկելով ներկայացված նախորդող ժամանակաշրջանների համեմատելի այն գումարները, որոնցում տեղի է ունեցել սխալը, կամ եթե սխալը տեղի է ունեցել նախքան ամենավաղ ներկայացված ժամանակաշրջանը, այդ դեպքում՝ վերահաշվարկելով ներկայացված ամենավաղ նախորդող ժամանակաշրջանի համար ակտիվների, պարտավորությունների և զուտ ակտիվների սկզբնական մնացորդները: Ֆինանսական հաշվետվությունները, ներառյալ նախորդ տարիների համադրելի տեղեկատվությունը, ներկայացված են այնպես, կարծես ուղղումը կատարվել է այն ժամանակաշրջանում, որի ընթացքում առաջացել է դրա կատարման անհրաժեշտությունը: Հետևաբար, յուրաքանչյուր ներկայացված ժամանակաշրջանին վերաբերող ուղղման գումարը վերագրվում է այդ տարվա ֆինանսական տեղեկատվությանը:

3 Հաշվապահական հաշվառման էական քաղաքականություն

3.1 Արտարժույթ

Արտարժույթով գործարքներ

Ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս Հիմնադրամի համար գործառնական արժույթից տարբեր այլ արժույթով իրականացված գործարքները գրանցվում են գործարքի օրվա դրությամբ Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի (ՀՀ ԿԲ) կողմից հրապարակված փոխարժեքով: Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով դրամային հոդվածները վերահաշվարկվում են՝ կիրառելով հաշվետու ամսաթվի դրությամբ ՀՀ ԿԲ-ի կողմից հրապարակված փոխարժեքը. 2023թ. դեկտեմբերի 31-

ի դրությամբ 1 ԱՄՆ դոլարը կազմում էր 404.79 ՀՀ դրամ, 1 եվրոն՝ 447.90 ՀՀ դրամ (2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 1 ԱՄՆ դոլարը կազմում էր 393.57 ՀՀ դրամ, 1 եվրոն՝ 420.06 ՀՀ դրամ):

Արտարժույթով գործարքներից, ինչպես նաև արտարժույթով արտահայտված դրամային հոդվածների վերահաշվարկումից առաջացած փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են ժամանակաշրջանի արդյունքում:

3.2 Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկման կորուստները, եթե այդպիսիք կան:

Սկզբնական արժեքը ներառում է հիմնական միջոցների ձեռքբերմանն ուղղակիորեն վերագրելի ծախսերը: Սեփական ուժերով կառուցված ակտիվների սկզբնական արժեքը ներառում է նյութերի արժեքը, ուղղակի աշխատուժի գծով ծախսումները, ակտիվն իր նպատակային օգտագործման համար աշխատանքային վիճակի բերելու հետ անմիջականորեն կապված ցանկացած այլ ծախսումները, ակտիվի ապատեղակայման և քանդման ծախսերը, տեղանքի վերականգնման ծախսերը, ինչպես նաև կապիտալացված փոխառության ծախսումները: Ձեռքբերված համակարգչային ծրագրերը, որոնք հանդիսանում են համապատասխան սարքավորման ֆունկցիոնալության անբաժանելի մասը, կապիտալացվում են որպես սարքավորման մաս:

Երբ հիմնական միջոցի միավորը բաղկացած է օգտակար ծառայության տարբեր ժամկետ ունեցող խոշոր բաղկացուցիչներից, այդ բաղկացուցիչները հաշվառվում են որպես հիմնական միջոցների առանձին միավորներ (հիմնական բաղկացուցիչներ):

Հիմնական միջոցների տարրը ապաճանաչվում է այն օտարելիս կամ, երբ այդ ակտիվի շարունակական օգտագործումից այլևս տնտեսական օգուտներ չեն ենթադրվում: Հիմնական միջոցների վաճառքից կամ շրջանառությունից դուրս բերումից առաջացած օգուտը կամ վնասը որոշվում է՝ համեմատելով օտարումից ստացված մուտքերը հիմնական միջոցի հաշվեկշռային արժեքի հետ և ցանկացած օգուտ կամ վնաս հաշվարկվում է որպես ակտիվի ապաճանաչումից ստացված միջոցների և հաշվեկշռային արժեքի տարբերություն և ճանաչվում զուտ հիմունքով համապարփակ ֆինանսական արդյունքում՝ «այլ եկամուտ/այլ ծախսեր» հոդվածում:

Հիմնական միջոցների բաղկացուցչի փոխարինման ծախսերը ճանաչվում են միավորի հաշվեկշռային արժեքում, երբ հավանական է, որ Հիմնադրամ կհոսեն այդ միավորի հետ կապված ապագա տնտեսական օգուտները, և վերջինիս արժեքը հնարավոր կլինի արժանապատվորեն չափել: Փոխարինվող բաղկացուցչի հաշվեկշռային արժեքն ապաճանաչվում է: Հիմնական միջոցների ամենօրյա սպասարկման ծախսերը ճանաչվում են համապարփակ ֆինանսական արդյունքում՝ դրանց առաջանալուն պես:

Հիմնական միջոցների միավորների մաշվածության հաշվարկը սկսվում է դրանց տեղադրման և շահագործման համար պատրաստ լինելու պահից, իսկ սեփական ուժերով կառուցված ակտիվների դեպքում՝ վերջիններիս կառուցումն ավարտելու և շահագործման համար պատրաստ լինելու պահից: Մաշվածությունը հաշվարկվում է ակտիվի սկզբնական արժեքի վրա՝ հանած դրա մնացորդային արժեքը:

Մաշվածությունը հաշվարկվում է հիմնական միջոցների հաշվեկշռային արժեքի վրա և նախատեսված է դուրս գրելու ակտիվների արժեքը դրանց օգտակար ծառայության վերջում: Մաշվածությունը ճանաչվում է համապարփակ ֆինանսական արդյունքում է կիրառելով գծային մեթոդը հիմնական միջոցների յուրաքանչյուր մասի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում, քանի որ այս մեթոդն առավել ճշգրիտ է արտացոլում ակտիվի օգտագործման հետ կապված ապագա տնտեսական օգուտների ստացման մոդելը:

Գնահատված օգտակար ծառայության ժամկետները, մնացորդային արժեքները և մաշվածության մեթոդը վերանայվում են յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ՝ բոլոր տեսակի գնահատումներում փոփոխությունների ազդեցությունը հաշվառելով առաջընթաց սկզբունքով: Ստորև ներկայացված են հիմնական միջոցների խոշոր միավորների օգտակար ծառայության գնահատված ժամկետները ընթացիկ և համադրելի ժամանակաշրջանների համար՝

Համակարգիչներ ու գրասենյակային սարքավորումներ	-	1-5 տարի
Տնտեսական գույք	-	5 տարի
Փոխադրամիջոցներ	-	5 տարի

3.3 Ոչ նյութական ակտիվներ

Ոչ նյութական ակտիվները, որոնք ձեռք են բերվել Հիմնադրամի կողմից և ունեն օգտակար ծառայության որոշակի ժամկետ, ներկայացված են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և արժեզրկումից կորուստները:

Ամորտիզացիան ճանաչվում է տարվա արդյունքում կամ ավելացվում է այլ ակտիվի սկզբնական արժեքին՝ կիրառելով գծային մեթոդը ոչ նյութական ակտիվի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում, որը կազմում է 5 տարի:

3.4 Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների արժեզրկում

Անորոշ օգտակար ծառայության ժամկետ ունեցող ակտիվները չեն ամորտիզացվում և յուրաքանչյուր տարի ենթարկվում են արժեզրկման ստուգման: Մաշվող ակտիվներն արժեզրկման համար վերանայվում են, երբ իրադարձությունները և հանգամանքների փոփոխությունները վկայում են այն մասին, որ դրանց հաշվեկշռային արժեքը կարող է չվերականգնվել: Արժեզրկման կորուստը ճանաչվում է այն գումարով, որով ակտիվի հաշվեկշռային արժեքը գերազանցում է փոխհատուցվող գումարը:

Փոխհատուցվող գումարը վաճառքի զուտ գնից և օգտագործման արժեքից առավելագույնն Եթե ակտիվի կամ դրամաստեղծ միավորի փոխհատուցվող գումարն ավելի փոքր է նրա հաշվեկշռային արժեքից, ապա ակտիվի կամ դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեք նվազեցվում է մինչև փոխհատուցվող գումարը: Արժեզրկումից կորուստներն անմիջապես ճանաչվում են որպես ծախս, բացառությամբ այն դեպքերի, երբ համապատասխան ակտիվ հաշվառվում է վերագնահատված արժեքով, որի դեպքում արժեզրկումից կորուստը դիտվ է որպես վերագնահատումից արժեքի նվազում:

Երբ հետագայում արժեզրկումից կորուստը հակադարձվում է, ապա ակտիվի կամ դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը պետք է ավելացվի մինչև նրա փոխհատուցվող գումարը, բայց այնպես, որ ակտիվի ավելացված հաշվեկշռային արժեքը չգերազանցի այն հաշվեկշռային արժեքը, որը որոշված կլիներ, եթե նախորդ տարիներին ա ակտիվի կամ դրամաստեղծ միավորի գծով արժեզրկումից կորուստներ ճանաչված չլինեին Արժեզրկումից կորստի հակադարձումն անմիջապես ճանաչվում է որպես եկամուտ, բացառությամբ այն դեպքերի, երբ համապատասխան ակտիվը հաշվառվում է վերագնահատված արժեքով, որի դեպքում արժեզրկումից կորստի ցանկացած հակադարձում դիտվում է որպես վերագնահատումից արժեքի աճ:

3.5 Շնորհներ և նվիրատվություններ

Նվիրատվությունները ստացվում են որոշակի նպատակներով և նախատեսված չեն Հիմնադրամի կողմից այլ նպատակներով օգտագործման համար: Այդ նվիրատվությունները չեն ճանաչվում, քանի դեռ չկա հիմնավորված երաշխիք, որ Հիմնադրամը կատարելու է դրան կից բոլոր պայմանները, և որ շնորհը ստացվելու է: Այս միջոցները նախապես հաշվառվում են որպես պարտավորություն և ճանաչվում են որպես եկամուտ համապարփակ արդյունքների մասին հաշվետվությունում Հիմնադրամի՝ նպատակային միջոցների նվիրատվության պայմանագրերով սահմանված պարտավորությունների կատարմանը զուգընթաց: Որպես կանոն, այսպիսի նվիրատվություններից ստացված եկամուտը ճանաչվում է այդ պարտավորությունների կատարմանը զուգահեռ:

Դրամաշնորհները, որոնք ստացվել են արդեն իսկ կրած ծախսերի կամ վնասների փոխհատուցման համար կամ Հիմնադրամին անհապաղ ֆինանսական աջակցություն ցուցաբերելու նպատակով՝ առանց հետագա ծախսումների, ճանաչվում են որպես եկամուտ այն ժամանակաշրջանում, որում ստացվում են:

3.6 Զուտ ակտիվներ

Հիմնադրամի զուտ ակտիվները ներառում են գործունեությունից կուտակված հավելաճը կամ պակասորդը: Հիմնադրամի զուտ ակտիվները հիմնադիրներին բաշխման ենթակա չեն ո՛չ բնականոն գործունեության ընթացքում, ո՛չ էլ լուծարման ժամանակ:

3.7 Վարձակալված ակտիվներ

Հիմնադրամը վարձակալում է գույք: Վարձակալության պայմանագրերը կարող են պարունակել ինչպես վարձակալության, այնպես էլ ոչ վարձակալության բաղադրիչներ: Հիմնադրամը պայմանագրով նախատեսված փոխհատուցումը հատկացնում է վարձակալության և ոչ վարձակալության բաղադրիչներին՝ հիմք ընդունելով դրանց առանձին գները: Այնուամենայնիվ, անշարժ գույքի վարձակալության դեպքում, որոնց դեպքում Հիմնադրամը վարձակալ է հանդիսանում, որոշել է չառանձնացնել վարձակալության և ոչ վարձակալության բաղադրիչների և փոխարենը հաշվառում է այդ պայմանագրերը որպես մեկ վարձակալության բաղադրիչ:

Օգտագործման իրավունքի ձևով ակտիվը չափվում է սկզբնական արժեքով, որը ձևավորվում է.

- վարձակալության գծով պարտավորության սկզբնական չափումից,
- վարձակալության մեկնարկի ամսաթվին կամ նախքան վարձակալության մեկնարկի ամսաթիվը կատարված ցանկացած վարձակալական վճարներից (հանած ստացված ցանկացած խրախուսումները),
- ցանկացած սկզբնական ուղղակի ծախսերից, և
- ակտիվը վարձակալության պայմանագրով պահանջվող պայմաններին համապատասխան վերականգնելու ծախսերից:

Օգտագործման իրավունքի ձևով ակտիվները սովորաբար մաշվում են ակտիվի օգտակար ծառայության և վարձակալության ժամկետից ավելի կարճ ժամանակահատվածում գծային հիմունքով: Եթե Հիմնադրամն ունի գնման հնարավորության իրագործման խելամիտ համոզմունք, ապա օգտագործման իրավունքի ձևով ակտիվը մաշվում է հիմքում ընկած ակտիվի օգտակար ծառայության ժամկետի ընթացքում:

3.8 Պաշարներ

Պաշարներն այն ակտիվներն են, որոնք պահվում են սովորական գործունեության ընթացքում վաճառքի կամ բաշխման համար, կամ հումքի, կամ նյութի ձևով՝ արտադրանքի թողարկման կամ ծառայությունների մատուցման ընթացքում օգտագործելու համար: Պահեստամասերը, վթարային սարքավորումները և օժանդակ սարքավորումները նույնպես ճանաչվում են որպես պաշար, եթե դրանք չեն համապատասխանում հիմնական միջոցների սահմանմանը:

Պաշարները հաշվառվում են ինքնարժեքից և իրացման զուտ արժեքից նվազագույնով: Իրացման զուտ արժեքը սովորական գործունեության ընթացքում վաճառքի ձևավորվող գինն է՝ հանած համալրման և վաճառքը կազմակերպելու համար անհրաժեշտ ծախսումները:

3.9 Ֆինանսական գործիքներ

Ճանաչում և ապաճանաչում

Ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները ճանաչվում են, երբ Հիմնադրամը դառնում է ֆինանսական գործիքի պայմանագրային կողմ:

Ֆինանսական ակտիվները սկզբնական ճանաչման ժամանակ չափվում են իրական արժեքով, հանած գործարքի հետ կապված ուղղակիորեն վերագրվող ծախսումները, հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով:

Ֆինանսական պարտավորություններ չափվում են իրական արժեքով հանած գործարքի հետ կապված ուղղակիորեն վերագրվող ծախսումները և չեն ճանաչվում իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով, հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով: Հիմնադրամի ֆինանսական ակտիվները, ըստ կատեգորիաների ներկայացված են ծանոթագրություն 16.2-ում:

Ֆինանսական ակտիվների հետագա չափումը

Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ

Սկզբնական ճանաչումից հետո այս ակտիվները չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Այն դեպքերում, երբ զեղչման ազդեցությունը աննշան է, զեղչում չի կատարվում: Ֆինանսական գործիքների այս կատեգորիայում են դասակարգվում Հիմնադրամի դրամական միջոցները և առևտրային դեբիտորական պարտքերը:

Ֆինանսական պարտավորությունների դասակարգումը և չափումը

Հիմնադրամի ֆինանսական պարտավորությունները ներառում են առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը:

3.10 Աշխատակիցների կարճաժամկետ հատուցումներ

Աշխատակիցների կարճաժամկետ հատուցումների գծով պարտավորությունները չափվում են չզեղչված հիմունքով և ծախսագրվում են համապատասխան ծառայությունը մատուցելուց հետո: Պարտավորությունը ճանաչվում է այն գումարի չափով, որն ակնկալվում է վճարել կարճաժամկետ դրամական պարգևավճարների տեսքով, եթե Հիմնադրամն ունի ներկա կամ իրավական կամ կառուցողական պարտականություն այդ գումարը վճարել որպես անցյալ ծառայության արդյունք մատուցված աշխատակցի կողմից և պարտականությունը կարող է արժանահավատորեն գնահատվել:

3.11 Եկամուտ

Եկամուտը ձևավորվում է հիմնականում ստացված շնորհներից և նվիրատվություններց (տես ծանոթագրություն 3.5-ը՝ նվիրատվություններից եկամտի ճանաչման հաշվապահական հաշվառման քաղաքականության համար) և ծառայությունների մատուցումից:

Շնորհներից եկամուտ

Այս եկամուտը ճանաչվում է, երբ առկա է հիմնավորված երաշխիք, որ նվիրատվությունը ստացվելու է կամ, երբ նվիրատվությունը փաստացի ստացվել է:

Ծառայությունների մատուցում

Եկամուտը ճանաչվում է կամ ժամանակի մեջ որևէ պահին կամ ժամանակի ընթացքում, երբ Հիմնադրամը բավարարում է կատարման իր պարտականությունը՝ հաճախորդին փոխանցելով խոստացված ծառայությունը:

Ծառայությունների մատուցումից հասույթը գոյանում է մասնագիտական ծառայությունների, զեկույցների և այլ խորհրդատվական ծառայությունների մատուցումից:

4 Հիմնական միջոցներ

Հազար դրամ	Փոխադրամիջոցներ	Համակարգիչներ և գրասենյակային սարքավորումներ	Տնտեսական գույք	Ընդամենը
Սկզբնական արժեք				
2022թ. հունվարի 1-ի դրությամբ	34,886	90,036	26,733	151,655
Ավելացում	-	13,126	27,540	40,666
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	34,886	103,162	54,273	192,321
Ավելացում	-	10,593	-	10,593
Օտարման հետևանքով դուրսգրում	-	(2,159)	(7,487)	(9,646)
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	34,886	111,596	46,786	193,268
Կուտակված մաշվածություն				
2022թ. հունվարի 1-ի դրությամբ	26,209	71,729	14,018	111,956
Տարվա հաշվարկ	6,768	17,136	20,075	43,979
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	32,977	88,865	34,093	155,935
Տարվա հաշվարկ	1,909	10,696	4,773	17,378
Օտարման հետևանքով դուրսգրում	-	(2,153)	(7,341)	(9,494)
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	34,886	97,408	31,525	163,819
Հաշվեկշռային արժեք				
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	1,909	14,297	20,180	36,386
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	-	14,188	15,261	29,449

5 Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ

Հազար դրամ	Շինություններ
Հաշվեկշռային արժեք	
2022թ. հունվարի 1-ի դրությամբ	12,157
Պայմանագրի փոփոխություն	59,190
Մաշվածության գծով ծախս	(18,114)
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	53,233
Պայմանագրի փոփոխություն	(6,455)
Մաշվածության գծով ծախս	(18,618)
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	28,160

Ֆինանսական գործունեությունից առաջացած պարտավորությունների համադրում՝

	2023թ. հունվարի 1	Փոփոխություն	Վճարումներ	Ոչ դրամական շարժ		2023թ. դեկտեմբերի 31
				Տոկոսային ծախս	Արտարժույթի ազդեցություն	
Վարձակալության գծով պարտավորություններ	53,027	(7,112)	(22,996)	5,988	799	29,707
	53,027	(7,112)	(22,996)	5,988	799	29,707

	2022թ. հունվարի 1	Վճարումներ	Ոչ դրամական շարժ		2022թ. դեկտեմբերի 31
			Տոկոսային ծախս	Արտարժույթի ազդեցություն	
Վարձակալության գծով պարտավորություններ	12,290	(18,613)	2,051	(1,890)	53,027
	12,290	(18,613)	2,051	(1,890)	53,027

Վարձակալության գծով պարտավորություններ.

Վերլուծված է որպես	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ոչ ընթացիկ	11,000	31,482
Ընթացիկ	18,707	21,545
	29,707	53,027

6 Պաշարներ

Պաշարները հիմնականում բաղկացած են նոութբուքերից և պլանշետներից, որոնք ձեռք են բերվել Արցախի և Հայաստանի դպրոցներին նվիրաբերելու նպատակով, սակայն հաշվետու ամսաթվերի դրությամբ դեռ չեն նվիրաբերվել:

7 Կանխավճարներ և այլ ակտիվներ

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Տրված կանխավճարներ	4,049	20,514
Պետական բյուջեից դեբիտորական պարտքեր	-	222
Այլ	1,235	1,660
	5,284	22,396

8 Մնացորդներ բանկերում

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Բանկային հաշիվներ, այդ թվում՝	866,682	692,327
ՀՀ դրամ	*37,795*	*37,168*
ԱՄՆ դոլար	*752,570*	*590,008*
Եվրո	*76,317*	*65,151*
Ակնկալվող պարտքային կորուստ	(4,330)	(1,604)
	862,352	690,723

Ընթացիկ հաշիվները պահվում են հայկական բանկում, որն ունի պայմանագրային գործընկերոջ երկարաժամկետ ռիսկի BB- վարկանիշ (B+):

Ակնկալվող պարտքային կորստի գծով համադրումը համաձայն ՖՀՄՍ 9-ի ներկայացված է. ստորև.

Հազար դրամ	Ընդամենը
2022թ. հունվարի 1-ի դրությամբ	1,646
Արժեզրկման հակադարձում	(42)
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	1,604
Արժեզրկման կորուստ	2,726
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	4,330

9 Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ (վերանայված)
Առևտրային կրեդիտորական պարտքեր	3,376	18,770
Դրամական օգնության հաշվեգրում	19,387	26,050
Պետական բյուջե կրեդիտորական պարտքեր	12,554	18,670
Չօգտագործված արձակուրդային օրերի գծով պահուստ	59,792	51,382
Այլ	-	952
	95,109	115,824

Հիմնադրամն ունի ֆինանսական ռիսկի կառավարման քաղաքականություններ, որոնք ապահովում են բոլոր պարտավորությունների ժամանակին կատարում:

10 Սահմանափակ միջոցներ

Հազար դրամ	2023թ.	2022թ.
Մնացորդը տարեսկզբի դրությամբ	734,807	480,703
Մուտքեր տարվա ընթացքում	1,648,395	1,997,475
Շնորհի ստացում	325,406	-
Շնորհի վերադարձ	(787)	(737)
Օգտագործումը տարվա ընթացքում՝		
Կատարված ծախսերի գծով	(1,553,452)	(1,693,568)
Հիմնական միջոցների ձեռքբերման գծով	(10,441)	(49,066)
Մնացորդը տարեվերջի դրությամբ	1,143,928	734,807

Հաշվետու ժամանակաշրջանների ընթացքում ստացված նվիրատվությունների մանրամասն նկարագրությունը ներկայացված է ստորև (հազար ՀՀ դրամներով)՝

	Արժույթ	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Թիչ ֆոր օլ Ինք.	ԱՄՆ դոլար	1,603,597	1,909,398
Թիչ ֆոր օլ Ինք.	Եվրո	8,298	8,312
Դասավանդի՛ր Հայաստանի ընկերներ	ԱՄՆ դոլար	-	48,726
Ամերիկայի Հայ Ավետարանչական ընկերակցության Հ/մ-Ճ	ՀՀ դրամ	15,360	-
Եվրասիա Համագործակցության Հիմնադրամ	ՀՀ դրամ	-	11,312
Ի դրամ ՍՊԸ	ՀՀ դրամ	2,430	9,329
Այլ	ԱՄՆ դոլար	-	3,869
Այլ	ՀՀ դրամ	18,710	6,529
		1,648,395	1,997,475

Հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում 803,888 ԱՄՆ դոլարի չափով ստացվելիք դրամաշնորհները ճանաչվել են Դասավանդի՛ր Հայաստանի ընկերների հետ կնքված դրամաշնորհային պայմանագրերի շրջանակներում կատարված ծախսերի դիմաց: Ստացվելիք շնորհների դիմաց ֆինանսավորումը ստացվել է 2024 թվականին:

11 Ծրագրային ծախսեր

Հազար դրամ

	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի (վերաներ-կայացված)
Աշխատավարձ և համանման ծախսեր	327,595	356,173
Ֆինանսական աջակցություն	259,966	306,430
Շուկայավարման ծախսեր	73,254	85,159
Նվիրատվություն Հայաստանի դպրոցներին	55,724	63,262
TLA ակադեմիա	52,485	-
Ֆինանսական աջակցություն (Սերունդ ծրագիր)	45,915	38,507
Մասնագիտական ծառայություններ	39,826	77,622
Հավաքագրում և ուսուցում	37,088	15,013
Ներկայացուցչական և գործուղման ծախսեր	21,921	123,441
Մասնագիտական վերապատրաստում	17,290	2,238
Համայնքային ծախսեր	9,073	35,023
Հրատապ կրթության նախաձեռնություն	8,784	-
Հաղորդակցության ծախսեր	7,623	10,137
Այլ	6,960	11,495
	963,504	1,124,500

12 Ծրագրի աջակցության ծախսեր

Հազար դրամ

	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի (վերաներ-կայացված)
Աշխատավարձ և համանման ծախսեր	332,471	274,748
Շուկայավարման ծախսեր	62,189	24,345
Մասնագիտական ծառայություններ	5,639	14,075
Ներկայացուչական և գործուղման ծախսեր	4,672	16,831
Զարգացման ծախսեր	1,461	2,039
Տրանսպորտային և մոնիթորինգի ծախսեր	728	724
Այլ	138	918
	407,298	333,680

13 Վարչական ծախսեր

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Մասնագիտական ծառայություններ	59,865	57,645
Մաշվածության և ամորտիզացիայի ծախսեր	37,677	63,451
Աշխատավարձ և համանման ծախսեր	38,810	79,464
Ներկայացուչական և գործուղման ծախսեր	32,134	54,491
Գրասենյակային և կոմունալ ծախսեր	8,901	15,557
Ապահովագրության գծով ծախսեր	6,482	8,732
Վերանորոգման և պահպանման ծախսեր	2,011	1,487
Շուկայավարման ծախսեր	1,340	2,248
Տրանսպորտային և մոնիթորինգի ծախսեր	625	1,698
Այլ	6,000	5,099
	193,845	289,872

14 Շնորհներից եկամուտ

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Հատուկ նշանակության ֆոնդերից	1,563,893	1,742,634
Այլ	1,080	150
	1,564,973	1,742,784

Հիմնադրամը ստանում է նվիրատվություններ, դրամաշնորհներ և այլ տեսակի աջակցություն գործընկեր կազմակերպություններից և անհատներից: Նվիրատվությունների օգտագործումը սահմանափակվում է դոնորների կողմից: Սահմանափակումները վերաբերում են ֆոնդերի տնօրինմանը Հիմնադրամի Կանոնադրությամբ սահմանված գործողությունների մասով կամ սահմանափակվում են դոնորների կողմից հաստատված հատուկ նպատակների համար: Ֆոնդերը համարվում են սահմանափակված ստացման պահին և ճանաչվում են որպես եկամուտ, երբ սահմանափակումները իրացվում են Հիմնադրամի գործողությունների արդյունքում:

15 Հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման ընթացքում կատարված կարևոր դատողություններ

Ստորև ներկայացված են ղեկավարության՝ հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման ընթացքում կատարված դատողությունները, որոնք ամենաէական ազդեցությունն ունեն ֆինանսական հաշվետվությունների վրա:

Նվիրատվությունների հասանելիությունը

Հիմնադրամի կողմից կրթական, սոցիալական և մշակութային ծրագրերի ֆինանսավորումը մեծապես պայմանավորված է տվյալ տարում նվիրատվություններից ստացված եկամտից: Ղեկավարության կարծիքով Հիմնադրամը մինչ այսօր հնարավորություն է ունեցել համալրելու բավարար միջոցներ և չի ակնկալում այդ նվիրատվությունների էական նվազում կամ կրճատում տեսանելի ապագայում:

Ղեկավարության կողմից չեն հայտնաբերվել էական անորոշություններ՝ կապված այնպիսի դեպքերի կամ պայմանների հետ, որոնք էական կասկած կհարուցեին Հիմնադրամի գործունեության շարունակականության ապահովման վերաբերյալ: Ավելին, սույն ֆինանսական հաշվետվությունների ստորագրման ամսաթվի դրությամբ գործել են առաջիկա ժամանակաշրջանների համար գործընկեր կազմակերպությունների կողմից նվիրատվության պայմանագրերը:

16 Ֆինանսական գործիքներ

16.1 Հաշվապահական հաշվառման քաղաքականություններ

Ֆինանսական ակտիվի և ֆինանսական պարտավորության յուրաքանչյուր դասի համար կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը և ընդունված մեթոդների մանրամասները, ինչպես նաև եկամտի և ծախսերի ճանաչման չափանիշներն ու հիմքերը ներկայացված են ծանոթագրություն 3.9-ում:

16.2 Ֆինանսական գործիքների կատեգորիաները

Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքները ըստ կատեգորիաների ներկայացված են ստորև.

Ֆինանսական ակտիվներ

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ		
Ստացված շնորհներ	325,406	
Մնացորդներ բանկերում	862,352	690,723
Ընդամենը ֆինանսական ակտիվներ	1,187,758	690,723

Ֆինանսական պարտավորություններ

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ամորտիզացված արժեքով պահվող ֆինանսական պարտավորություններ		
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	82,555	96,202
Վարձակալության գծով պարտավորություն	29,707	53,027
Ընդամենը ֆինանսական պարտավորություններ	112,262	149,229

17 Ֆինանսական ռիսկի կառավարման ուղղություններ

Ֆինանսական գործիքների հետ կապված՝ Հիմնադրամը ենթարկվում է զանազան ռիսկերի: Այս ռիսկերն են շուկայական ռիսկը, պարտքային ռիսկը և իրացվելիության ռիսկը:

Ֆինանսական ռիսկի գործոններ

ա) Շուկայական ռիսկ

Ֆինանսական գործիքների օգտագործման ընթացքում Հիմնադրամը ենթարկվում է շուկայական ռիսկի, հատկապես՝ արտարժութային ռիսկի, որոնք բխում են գործառնական գործունեությունից:

Արտարժութային ռիսկ

Հիմնադրամը գործարքներ է իրականացնում արտարժույթով և, հետևաբար, ենթարկվում է արտարժույթի փոխարժեքային տատանումների ազդեցությանը:

Հիմնադրամի գործարքների հիմնական մասն իրականացվում է հայկական դրամով: Արտարժույթի փոխարժեքային տատանումներից կախվածությունն առաջանում է Հիմնադրամի նվիրատվություններից, որոնք, ի սկզբանե, արտահայտված են հիմնականում ԱՄՆ դոլարով և եվրոյով:

Դրամի արժևորումը ԱՄՆ դոլարի և եվրոյի նկատմամբ 10%-ով (2022թ.՝ 10%) կունենա հետևյալ ազդեցությունը.

Հազար դրամ	ԱՄՆ դոլարի ազդեցություն		Եվրոյի ազդեցություն	
	2023թ.	2022թ.	2023թ.	2022թ.
Տարվա արդյունք	(105,364)	(55,379)	(7,632)	(6,515)
	(105,364)	(55,379)	(7,632)	(6,515)

Տոկոսադրույքային ռիսկ

Հիմնադրամը չի ենթարկվում տոկոսադրույքային ռիսկի, քանի որ չունի տոկոսակիր ֆինանսական ակտիվներ կամ պարտավորություններ հաշվետու կամ նախորդ ժամանակաշրջանների վերջի դրությամբ: Հետևաբար ղեկավարությունը չի իրականացնում տոկոսադրույքի զգայունության պաշտոնական վերլուծություն տոկոսադրույքի շուկայի փոփոխությունների համար:

բ) Պարտքային ռիսկ

Պարտքային ռիսկն առաջանում է այն դեպքում, երբ պայմանագրային գործընկերը չի կատարում իր պարտավորությունները, որի հետևանքով Հիմնադրամը կարող է ֆինանսական կորուստներ կրել: Հիմնադրամի պարտքային ռիսկն առաջանում է ֆինանսական ակտիվներից՝ ներառյալ բանկերում պահվող դրամական միջոցները և դրանց համարժեքները:

Պարտքային ռիսկը կառավարվում է խմբային հիմունքով՝ ելնելով Հիմնադրամի պարտքային ռիսկի կառավարման քաղաքականությունից և ընթացակարգերից:

Բանկերում պահվող դրամական միջոցների մնացորդների մասով պարտքային ռիսկը գնահատվում է որպես նվազագույն, քանի որ այդ մնացորդները պահվում են բացառապես բարձր վարկանիշ ունեցող ֆինանսական հաստատություններում:

Պարտքային ռիսկի առավելագույն չափն իրենից ներկայացնում է ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքը:

գ) Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկն այն ռիսկն է, որ Հիմնադրամն ի վիճակի չի լինի մարել իր պարտավորվածությունները:

Հիմնադրամը վարում է իրացվելիության կառավարման քաղաքականություն՝ դրամարկղում և բանկային հաշիվներում պահելով բավարար միջոցներ, ինչպես նաև պահելով բարձր իրացվելիություն ունեցող ակտիվներ՝ գործառնական պարտավորությունները ժամանակին մարելու նպատակով:

Հետևյալ աղյուսակում ներկայացված է Հիմնադրամի ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորությունների գծով պայմանագրային մնացյալ մարման ժամկետները: Աղյուսակը պատրաստված է ֆինանսական պարտավորությունների չզեղչված դրամական միջոցների հոսքերի հիման վրա՝ հաշվի առնելով ամենավաղ ամսաթիվը, երբ Հիմնադրամը ստիպված կլիներ մարել այդ պարտավորությունները: Աղյուսակը ներառում է տոկոսների և մայր գումարի գծով դրամական միջոցների հոսքերը:

2023թ.	Անտոկոս	Պարտավորություն ֆինանսական վարձակալության գծով	Ընդամենը
Միջին կշռված արդյունավետ տոկոսադրույք (%)		10.9%	
Մինչև 3 ամիս	22,763	4,846	27,609
3 ամսից մինչև 1 տարի	17,938	14,537	32,475
1-3 տարի	41,854	12,220	54,074
	82,555	31,603	114,158

2022թ.	Անտոկոս	Պարտավորություն ֆինանսական վարձակալության գծով	Ընդամենը
Միջին կշռված արդյունավետ տոկոսադրույք (%)		10.8%	
Մինչև 3 ամիս	44,820	5,598	50,418
3 ամսից մինչև 1 տարի	15,415	16,793	32,208
1-3 տարի	35,967	36,899	72,866
	96,202	59,290	155,492

Հիմնադրամն իրացվելիության ռիսկի գնահատման և կառավարման ժամանակ հաշվի է առնում ֆինանսական ակտիվներից ակնկալվող դրամային հոսքերը, մասնավորապես՝ դրամական միջոցները և դեբիտորական պարտքերը: Հիմնադրամի դրամական միջոցները և դեբիտորական պարտքերն էականորեն գերազանցում են անհրաժեշտ դրամական արտահոսքերը:

18 Իրական արժեքի չափում

Հիմնադրամը սկզբնական ճանաչումից հետո իրական արժեքով չափվող ակտիվները և պարտավորությունները դասակարգում է 1-ից մինչև 3-րդ մակարդակներում՝ հիմնվելով իրական արժեքի դիտարկելիության աստիճանի վրա: Այս երեք մակարդակները ներկայացված են ստորև.

- 1-ին մակարդակ՝ իրական արժեքները ստացվում են նմանատիպ ակտիվների կամ պարտավորությունների ակտիվ շուկաներում գնանշվող գներից (չճշգրտված),
- 2-րդ մակարդակ՝ իրական արժեքները ստացվում են 1-ին մակարդակում ներառված գնանշվող գներից տարբեր այլ ելակետային տվյալներից, որոնք ակտիվի կամ պարտավորության գծով դիտարկվում են կամ ուղղակիորեն (այսինքն՝ որպես գներ), կամ անուղղակիորեն (այսինքն՝ գների հիման վրա ստացվող),
- 3-րդ մակարդակ՝ իրական արժեքները ստացվում են գնահատման հնարքների միջոցով, որոնք ներառում են ակտիվի կամ պարտավորության գծով ելակետային տվյալներ, որոնք հիմնված չեն դիտարկվող շուկայական տվյալների վրա (ոչ դիտարկելի ելակետային տվյալներ):

Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներն ունեն 3 տարի օգտակար ծառայության ժամկետ և դրանց մասով իրական արժեքը դասակարգվում է իրական արժեքի հիերարխիայի 2-րդ մակարդակում: Իրական արժեքի գնահատումը որոշվում է՝ օգտագործելով ներկա արժեքի հաշվարկման մոտեցումը՝ զեղչելով պայմանագրով նախատեսված դրամական հոսքերը միջինում 10.8 %-ով: Ամենազգալի փոփոխականը զեղչման տոկոսադրույքն է:

19 Պայմանագրային պարտավորվածություններ

Հիմնադրամի կողմից իրականացվող ծրագիրը տևում է երկու տարի, որի յուրաքանչյուր փուլը սկսվում է սեպտեմբեր ամսին և ավարտվում հաջորդ տարվա հունիս ամսին: Հիմնադրամը ֆինանսական աջակցության պայմանագրեր է կնքում ծրագրի այն մասնակիցների հետ, ովքեր բարեհաջող անցնում են Ամառային Ինստիտուտի վերապատրաստման դասընթացը և միանում են Հիմնադրամին որպես հավանական մասնակիցներ: 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ութերորդ և իներորդ սերունդների կրթական ծրագիրը ընթացքի մեջ է և կավարտվի 2024թ. և 2025թ. հունիս ամիսներին համապատասխանաբար: Մասնակիցների հետ կնքված ֆինանսական աջակցության պայմանասգրերի մասով Հիմնադրամն ունի պայմանագրային պարտավորություններ, որոնց մասին տեղեկատցությունը ներկայացված է ստորև.

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Մինչև 1 տարի	150,304	189,600
1-2 տարի	53,160	50,040
	203,464	239,640

Ինչպես նաև Հիմնադրամն ունի պարտավորություններ գործընկեր-համալսարանների նկատմամբ՝ մասնակիցների մագիստրատուրայի երկամյա ծրագրի համար վճարվելիք կրթաթոշակների մասով, որոնց մասին տեղեկատվությունը ներկայացված է ստորև.

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Մինչև 1 տարի	11,000	10,475
1-2 տարի	5,500	5,175
	16,500	15,650

20 Պայմանականություններ

20.1 Հարկեր

Հայաստանի Հանրապետության հարկային օրենսդրությունը հաճախակի ենթարկվում է փոփոխությունների, ինչը որոշ դեպքերում մեկնաբանությունների կարիք է առաջացնում: Հաճախ տարբեր հարկային և իրավասու մարմիններ տարբեր մեկնաբանություններ ունեն: Հարկերը հարկային մարմինների կողմից ենթակա են վերանայման և ուսումնասիրության: Հարկային մարմիններն օրենքով լիազորված են տուգանքներ և տույժեր առաջադրել:

Վերոհիշյալ հանգամանքները Հայաստանում կարող են առաջացնել ավելի մեծ հարկային ռիսկեր, քան այլ երկրներում: Ղեկավարությունը համոզված է, որ հարկային պարտավորությունների գծով կատարել է համապատասխան հատկացումներ հարկային օրենսդրության իրենց մեկնաբանության հիման վրա: Այնուամենայնիվ, հարկային մարմինների մեկնաբանությունները կարող են տարբերվել, և դրանց ազդեցությունը կարող է զգալի լինել:

21 Կապակցված կողմեր

Հիմնադրամի կառավարումը վերահսկվում է Հոգաբարձուների խորհրդի կողմից, որը բաղկացած է 5 հոգաբարձուներից՝ Սեմ Սիմոնյանի նախագահությամբ: Հոգաբարձուների խորհրդի նախագահը կամ հոգաբարձուները Հիմնադրամից վարձատրություն չեն ստանում:

Հիմնադրամին կապակցված կողմեր են հանդիսանում Teach For All, Inc. ընկերությունը, որպես գործընկեր կազմակերպություն, Հոգաբարձուների խորհրդի անդամները, ինչպես նաև ղեկավարության ներկայացուցիչները:

21.1 Գործարքներ կապակցված կողմերի հետ

Հաշվետու տարվա ընթացքում Հիմնադրամի և իր կապակցված կողմերի միջև իրականացվել են հետևյալ գործարքները, և հաշվետու ամսաթվի դրությամբ մնացորդները հետևյալն են:

Հազար դրամ Գործարքներ	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Ստացված նվիրատվություններ	1,611,895	1,966,436
Մնացորդներ		
Ստացված շնորհներ	216,922	-
Սահմանափակ միջոցներ	1,118,589	701,584

21.2 Գործարքներ ղեկավարության և նրանց անմիջական ազգականների հետ

Հիմնական ղեկավար անձնակազմը ժամանակաշրջանի ընթացքում ստացել է հետևյալ վարձատրությունը.

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Աշխատավարձ և պարգևատրումներ	170,611	222,272
Մնացորդներ		
Չօգտագործված արձակուրդային օրերի գծով պահուստ	15,576	15,729

22 Համեմատական ֆինանսական հաշվետվությունների վերահաստատում

Հաշվետու տարվա ընթացքում Հիմնադրամը վերանայել է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության ներկայացման ձևաչափը, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների համապատասխան ծանոթագրությունները, որոնք հանգեցրել են համեմատական տարվա համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում որոշակի ծախսերի վերադասակարգմանը:

Նախկինում Հիմնադրամը դասակարգել է իր ծախսերը երեք հոդվածներով՝ ծրագրային ծախսեր, վարչական ծախսեր և այլ ծախսեր: Հիմնադրամի գործունեության տեսակներում էական փոփոխություններից հետո ղեկավարությունը վերանայել է այս մոտեցումը և 2023թ. ներդրել ծախսերի նոր դասակարգում, այն է ծրագրի աջակցության ծախսեր:

Արդյունքում, 2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում «Ծրագրի աջակցության ծախսեր» հոդվածին է վերագրվել է 333,680 հազար դրամ, որից 258,097 հազար դրամը նախկինում «Ծրագրային ծախսեր» հոդվածին վերագրվածից, իսկ 75,583 հազար դրամը՝ «Վարչական ծախսեր» հոդվածին վերագրվածից :

Հաշվետու տարում ղեկավարությունը հայտնաբերել և ձևակերպել է 2022թ.-ի արդյունքներին վերաբերելի եկամտային հարկի գծով չձևակերպված պարտավորություն 9,371 հազար ՀՀ դրամի չափով: Արդյունքում բյուջեի գծով կրեդիտորական պարտավորությունը և տարվա վնասը ավելացել են նույն գումարի չափով:

Signer: ՀՀ ՊԵԿ
Date: 21.08.2024 12:47